



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 190 - Ա

29 մայիսի 2019 թ

**ՄԿԵՐ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻՆ ԵՎ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Միեր Կյուրեղյանին և Գագիկ Հովհաննիսյանին 2019 թվականի մայիսի 31-ին, մեկ օրով, գործուղել ք. Երևան՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ ուսումնական կենտրոն, «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում» դասընթացին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

29.05.2019



[Handwritten signature]

ՄԱՐԶՊԵՏԱՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԿՆՆԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ
ՊՈՏՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՍՊԸ
ՄԱՐԶՊԵՏԱՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԿՆՆԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ
ՊՈՏՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՍՊԸ
SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ